

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԵՎ ՆՐԱՆ ԵՆԹԱԿԱ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ  
ԱՅԼ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ  
Կ Ա Ր Գ**

**ԵՐԵՎԱՆ 2007**



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ  
Հ Ր Ա Մ Ա Ն Ա Գ Ի Ր Ը**

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԵՎ ՆՐԱՆ ԵՆԹԱԿԱ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ  
ԱՅԼ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ  
ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 85-րդ հոդվածով **ո Ր Ո Շ Ո Ս Ի Ե Մ**.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության կառավարության և նրան ենթակա ղեկավարման կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգը համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Նախագահի 2002 թվականի մարտի 16-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության կարգը սահմանելու մասին» ՆՀ-1064 հրամանագիրը:

3. Սույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում դաժեցնական հրադարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
Ն Ա Խ Ա Գ Ա Հ**

**Ռ. ՔՈԶԱՐՅԱՆ**

2007թ. հուլիսի 18

Երևան

ՆՀ - 174 - Ն

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ

ՀՀ Նախագահի

2007 թ. հուլիսի 18-ի

ՆՀ - 174 - Ն հրամանագրի

## Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԵՎ ՆՐԱՆ ԵՆԹԱԿԱ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՅԼ  
ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

### I ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով Հայաստանի Հանրապետության կառավարությանը (այսուհետ՝ կառավարություն) վերադասված լիազորությունների իրականացման կազմակերպական հիմունքները, կառավարության գործունեության կազմակերպման, նիստերի նախադասրասման և հրավիրման, որոշումների ընդունման և դրանց կատարման աղափարման կարգը:

2. Կառավարության իրավասությանն են ենթակա ղեկավարման կառավարման բոլոր այն հարցերը, որոնք օրենքով վերադասված չեն այլ ղեկավարման կամ ենթակա ինֆնակառավարման մարմինների: Կառավարությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային դայմանագրերով, Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության Ազգային

ժողովի որոշումներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դասարանի որոշումներով, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերով և կարգադրություններով, կառավարության որոշումներով, ինչդեռ նաև սույն կարգով:

3. Կառավարությունն ընդունում է որոշումներ, որոնք ենթակա են կասարման հանրապետության ամբողջ տարածքում:

4. Կառավարությունն իր գործունեության կազմակերպումն իրականացնում է կառավարության նիստերի միջոցով, որոնց աղահովումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմը (այսուհետ՝ կառավարության աշխատակազմ):

5. Հայաստանի Հանրապետության վարչապետը (այսուհետ՝ վարչապետ) ղեկավարում է կառավարության գործունեությունը և համակարգում Հայաստանի Հանրապետության նախարարների ու նրան ենթակա ղեկավարման այլ մարմինների ղեկավարների աշխատանքը: Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ իրեն վերադրված լիազորությունների շրջանակում, ինչդեռ նաև սույն կարգով նախատեսված դեղքերում վարչապետն ընդունում է որոշումներ կառավարության գործունեության կազմակերպմանն առնչվող հարցերի շուրջ:

6. Հայաստանի Հանրապետության նախարարներից մեկը կարող է վարչապետի առաջարկությամբ Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից նշանակվել փոխվարչապետ և փոխարինել վարչապետին վերջինիս բացակայության ժամանակ:

7. Կառավարության ֆաղափականությունն առանձին բնագավառներում մշակում և իրականացնում են հանրապետական գործադիր մարմինները (այսուհետ՝ ՀԳՄ), որոնք ստեղծվում, վերակազմակերպվում և լուծարվում են վարչապետի առաջարկությամբ՝ Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրով:

8. ՀԳՄ-ներն են Հայաստանի Հանրապետության նախարարություն-

ները և կառավարությանն առընթեր ղեկական կառավարման մարմինները:

9. ՀԳՄ-ն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, Հայաստանի Հանրապետության միջազգային դայմանագրերին և այլ իրավական ակտերին համապատասխան և դրանցով իրեն վերադասված լիազորությունների շրջանակներում:

10. ՀԳՄ-ն ունի կանոնադրություն, Հայաստանի Հանրապետության զինանշանի դասկերով ու իր անվանմամբ հայերեն և այլ լեզուներով կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և անհասկանազման այլ միջոցներ:

11. ՀԳՄ-ի կանոնադրությունը և կառուցվածքը հաստատում է կառավարությունը: ՀԳՄ-ի կանոնադրությամբ ղեկ է սահմանվեն ՀԳՄ-ի՝

- 1) լրիվ անվանումը և գտնվելու վայրը.
- 2) կառավարման ոլորտները և խնդիրները.
- 3) կառավարման և ղեկավարման կազմակերպումն ու ղեկավարների լիազորությունները.
- 4) կառուցվածքային ստորաբաժանումների հիմնական խնդիրները.
- 5) ՀԳՄ-ի կողմից ղեկական գույքի սնօրինման, սիրադեսման և օգտագործման կարգը.
- 6) գործունեության կազմակերպման վերաբերյալ այլ էական դրույթներ:

12. Հայաստանի Հանրապետության նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն) իր համակարգի մեջ մտնող ղեկական մարմինների և կազմակերպությունների նկատմամբ վերադաս մարմին է:

13. Նախարարության համակարգը կազմված է նախարարից, նախարարի տեղակալներից, խորհրդականներից, մամուլի ֆարսուղարից, օգնականներից և ռեֆերենսներից, նախարարության աշխատակազ-

մից, սարածֆային ստորաբաժանումներից, նախարարության կառավարման ոլորտում գործող ղեկական մարմիններից, ինչդեռ նաև նախարարության ենթակայությանը հանձնված ղեկական ոչ առևտրային կազմակերպություններից:

14. Կառավարությանն առընթեր ղեկական կառավարման մարմնի համակարգը կազմված է այդ մարմնի ղեկավարից, ղեկական կառավարման մարմնի ղեկավարի սեղակալներից, ղեկական կառավարման մարմնի աշխատակազմից, սարածֆային ստորաբաժանումներից, ինչդեռ նաև այդ մարմնի ենթակայությանը հանձնված ղեկական ոչ առևտրային կազմակերպություններից:

15. ՀԳՄ-ի աշխատակազմը ղեկական կառավարչական հիմնարկ է, որն աղահովում է ՀԳՄ-ին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ վերադասված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումը և ֆաղափարական իրավահարաբերություններին նրա մասնակցությունը: ՀԳՄ-ի աշխատակազմի կառուցվածքում ընդգրկվում են կառուցվածֆային ստորաբաժանումներ (վարչություն, բաժին, ֆարսուղարություն) և առանձնացված ստորաբաժանումներ (գործակալություն, սեսչություն), որոնց ներկայացվող դահանջները սահմանում է կառավարությունը:

16. Գործակալությունն օրենքով, իսկ առանձին դեղքերում՝ նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ծառայությունների մասուցման գործառույթներ իրականացնող ղեկական կառավարչական հիմնարկի առանձնացված ստորաբաժանում է:

17. Տեսչությունն օրենքով, իսկ առանձին դեղքերում՝ նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված վերահսկողական գործառույթներ իրականացնող և դասասխանասվության միջոցներ կիրառող ղեկական կառավարչական հիմնարկի առանձնացված ստորաբաժանում է:

18. Կառավարության սարածֆային ֆաղափարականությունն իրագոր-

ծում են Հայասանի Հանրապետության մարզպետները (Երևանում՝ Երևանի ֆաղափաղետը), որոնք համակարգում են ՀԳՄ-ների սարածֆային ծառայությունների գործունեությունը, բացառությամբ օրենքով նախատեսված դեղքերի:

19. Հայասանի Հանրապետության մարզպետների և Երևանի ֆաղափաղետի լիազորությունները և գործունեության կարգը սահմանվում են Հայասանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայասանի Հանրապետության օրենքներով և դրանց հիման վրա ընդունված Հայասանի Հանրապետության Նախագահի հրամանագրերով և կարգադրություններով, կառավարության ու վարչապետի որոշումներով:

20. Երևան ֆաղափում սարածֆային կառավարման առանձնահատկությունները սահմանվում են օրենքով:

## **II ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ**

21. Կառավարությունն իր գործունեությունը կազմակերպում է կառավարության ծրագրին համադասասխան:

22. Կառավարությունը յուրաֆանչյուր սարվա համար, մինչև յուրաֆանչյուր սարվա հունվարի 15-ը, ելնելով Հայասանի Հանրապետության սոցիալ-սնտեսական զարգացման իրավիճակից, հեռանկարներից, առանձին սարածֆների զարգացման անհրաժեշտությունից, ինչդետ նաև արսակարգ իրավիճակների առաջադրած դասանջներից, մշակում և հաստատում է կառավարության՝ սվյալ սարվա գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները՝ ըստ առանձին ուղղությունների:

23. Կառավարության սարեկան գործունեության միջոցառումների

ծրագրում և գերակա խնդիրներում նշվում են դրանց իրականացման կոնկրետ մասնախանութները՝ ըստ ժամկետների և ֆինանսավորման աղբյուրների:

24. Կառավարության սարեկան գործունեության միջոցառումների ծրագրի և գերակա խնդիրների նախագծի մշակումն իրականացնում է կառավարության աշխատակազմը՝ ՀԳՄ-ների ղեկավարների և Հայաստանի Հանրապետության մարզպետների (Երևանի ֆաղափառների) առաջարկությունների հիման վրա:

25. Կառավարության սարեկան գործունեության միջոցառումների ծրագրի և գերակա խնդիրների կատարման ադապտիվ մեթոդներով ներկայացնում է կառավարության աշխատակազմը:

26. Կառավարության աշխատակազմը յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո 10-օրյա ժամկետում նախադասրասում և սեղեկանք է ներկայացնում կառավարություն սլյալ եռամսյակում ֆինանսավորված հարցերի, իսկ ընթացիկ սարվա ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ կառավարության գործունեության միջոցառումների սարեկան ծրագրի և գերակա խնդիրների կատարման մասին:

27. Կառավարությունն իր գործունեությանն առնչվող խնդիրների լուծման, առանձին իրավական ակտերի նախագծերի, կառավարություն ներկայացված այլ հարցերի նախադասրասման և ֆինանսավորման կամ որոշակի իրադարձությունների և փաստերի մասին կառավարությանն առաջարկություններ, եզրակացություններ, սեղեկանքներ ներկայացնելու համար կարող է ստեղծել հանձնաժողովներ:

### III ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆԸ ՀԱՐՑԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

28. Կառավարության ֆինանսմանն են ներկայացվում Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով նրա իրավասությանը վերադասված հարցեր, որոնք բխում են կառավարության կողմից հաստատված կառավարության գործունեության միջոցառումների ծրագրից և գերակա խնդիրներից: Կառավարության ֆինանսմանը հարցեր կարող են ներկայացվել նաև հրատարակված լուծում դադարեցրած, ինչպես նաև սույն կարգի 120-րդ կետով նախատեսված առանձին դեղեկում:

29. Կառավարության ֆինանսմանը հարցեր են ներկայացնում Հայաստանի Հանրապետության Նախագահը՝ արտաքին ֆաղափականության, դաշտայնության և ազգային անվտանգության հարցերով, վարչապետը և Հայաստանի Հանրապետության նախարարները: Նախարարի բացակայության (ժամանակավոր անաշխատունակության, գործուղման, արձակուրդի, դաշտայնության թափուր լինելու) դեղեկում կառավարության ֆինանսմանը հարցեր կարող է ներկայացնել նախարարի համադասասխան տեղակալը:

30. Նախարարությունների կառավարման ոլորտում գործող ղեկավարական մարմինները, սարածֆային կառավարման մարմինները, նախարարությունների կազմում գործող գործակալությունները և տեսչությունները կառավարության ֆինանսմանը հարցեր են ներկայացնում սվյալ բնագավառի գործունեությունը համակարգող նախարարի միջոցով, իսկ կառավարությանն առընթեր ղեկավարման մարմինները, Հայաստանի Հանրապետության օրենքներով ստեղծված մշակույթ գործող հանձնաժողովները (խորհուրդները, ծառայությունները), Հայաստանի Հանրապետության վճարային դասարանի նախագահը,

Հայաստանի Հանրապետության գլխավոր դասախազը, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահը, ինչդեպ նաև սեղական ինֆնակառավարման մարմինները՝ վարչապետի միջոցով:

31. Կառավարության ֆննարկմանը ներկայացվում են՝

- 1) կառավարության օրենսդրական նախաձեռնության իրավունքի իրականացման հարցերով՝ Հայաստանի Հանրապետության համադասասխան օրենքների կամ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի որոշումների նախագծեր.
- 2) Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերի կամ կարգադրությունների նախագծեր.
- 3) կառավարության որոշումների նախագծեր.
- 4) կառավարության կարծիքին ներկայացված՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի լուծարման օրենսդրական նախաձեռնությունները:

32. Օրենսդրական և ենթաօրենսդրական լուծում չդառնալու հարցերը կառավարության ֆննարկմանն են ներկայացվում հաշվետվությունների, զեկուցագրերի, առաջարկությունների և գործնականում ընդունված՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության դառնալու գործընթացներին չհակասող այլ ձևերով, որոնք ենթակա չեն սույն կարգով նախատեսված համաձայնեցման, եթե այլ բան չի բխում նշված փաստաթղթերի հիմքի վրա հանդիսացող հանձնարարականներից: Նման դեպքերում, ինչդեպ նաև սույն կարգի 31-րդ կետի 1-ին, 2-րդ և 4-րդ ենթակետերով նախատեսված դեպքերում կառավարությունն ընդունում է արձանագրային որոշում:

33. Կառավարության ֆննարկմանը ներկայացվում են միայն հիմնավորված, միմյանց չկրկնող և արդեն լուծում ստացած հարցերին սկզբունքորեն նոր լուծում սալու կամ նոր ընդունված օրենսդրության դառնալու գործընթացներին դրանց համադասասխանեցնելու նպատակ հետադիմացի հարցեր:

34. Կառավարության ֆինանսականը ներկայացվող հարցի հիմնավորվածության, ներկայացված նյութերի արժանահավաստության, ամբողջականության և որակի համար դասասխանասվությունը կրում է հարցը ներկայացնողը:

35. Կառավարության ֆինանսականը ներկայացված Հայաստանի Հանրապետության օրենքների և Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի որոշումների նախագծերը դեֆ է համադասասխանեն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և օրենքներին ու չդեֆ է հակասեն Հայաստանի Հանրապետության սահմանադրական դասարանի որոշումներին:

36. Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերը կարող են չհամադասասխանել գործող օրենքների դահանջներին, եթե դրանք որոշակի բնագավառի իրավահարաբերությունների կարգավորման նոր սկզբունքներ են նախատեսում, ինչդեպ նաև նդասակ ունեն փոփոխություններ և լրացումներ առաջարկել արդեն իսկ գործող օրենքներում:

37. Կառավարության ֆինանսականը ներկայացվող այլ հարցերը դեֆ է բխեն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից և օրենքներից, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի որոշումներից, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերից և կարգադրություններից, կառավարության որոշումներից, եթե դրանք Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերի կամ կարգադրությունների և կառավարության որոշումների փոփոխություններ, լրացումներ կամ դրանցով կարգավորվող հարցերի նոր լուծումներ չեն նախատեսում:

38. Կառավարության ֆինանսականը ներկայացվող հարցերին առնչվող փաստաթղթերում հսակ նվում է, թե գործող օրենսդրության որակներում և դրանց որ մասերում է առաջարկվում կասարել փոփոխություններ կամ լրացումներ, կամ որակի գործողությունն է ան-

հրաժեշտ դադարեցնել: Նման դեղֆերում հարցի հետ միասին ներկայացվում է (ներկայացվում են) համադասասխան ակտի (ակտերի) մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագիծ:

39. Կառավարության ֆինանսականը ներկայացվող իրավական ակտերի նախագծերի փաթեթն իր մեջ ներառում է՝

- 1) առաջադրվող նախագիծը.
- 2) նախագծի ընդունման հիմնավորումը.
- 3) ներկայացվող հարցի կադակցությամբ լրացուցիչ ֆինանսական միջոցների դահանջի անհրաժեշտությունը, ինչդես նաև Հայասանի Հանրադեսության դեսական բյուջեի եկամուսներում և ծախսերում սղասվելիք փոփոխությունների մասին տեղեկանքը.
- 4) նախագծի ընդունման առնչությամբ ընդունվելիք այլ իրավական ակտերի նախագծերը կամ դրանց ընդունման անհրաժեշտության բացակայության մասին տեղեկանքը.
- 5) օրենքի նախագծի ներկայացման դեղմում՝ «Իրավական ակտերի մասին» Հայասանի Հանրադեսության օրենքով դահանջվող փաստաթղթերը:

40. Հայասանի Հանրադեսության օրենքների և Հայասանի Հանրադեսության Ազգային ժողովի նորմատիվ բնույթի որոշումների, Հայասանի Հանրադեսության Նախագահի հրամանագրերի և կարգադրությունների, կառավարության և վարչադեսի որոշումների նախագծերը համաձայնեցվում են Հայասանի Հանրադեսության արդարադասության նախարարի և տահագրգիռ նախարարների հետ, իսկ Հայասանի Հանրադեսության դասախագության, Հայասանի Հանրադեսության դասական համակարգի և Հայասանի Հանրադեսության կենսոնական բանկի գործունեությանը վերաբերող նախագծերը ներկայացվում են վերը նշված մարմինների դեկավարներին՝ կարծիքի:

41. Արտաֆին ֆադաֆականության, դատտղանության և ազգային

անվսանգության հարցերին վերաբերող իրավական ակտերի նախագծերը նախքան կառավարություն ներկայացնելն ուղարկվում են Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմ՝ կարծիքի:

42. Մարդու իրավունքներին և ազատություններին վերաբերող օրենքների նախագծերը նախքան կառավարություն ներկայացնելն ուղարկվում են Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների դաստիարակչության կարծիքի:

43. Նախքան Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի համաձայնեցմանը ներկայացնելը, Հայաստանի Հանրապետության օրենքների և Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նորմատիվ բնույթի որոշումների, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերի և կարգադրությունների, կառավարության և վարչապետի որոշումների նախագծերը ղեկավարվում է համաձայնեցվելն սյուս ԵՊՄԻՆՆԵՐԻ ԻԵՏ՝ դրանք սահմալուց ԻԵՏՈ 5-ՕՐԵՅԱ ԺԱՄԼԵՏՈՒՄ:

44. Կառավարության ֆինանսական ներկայացվող Հայաստանի Հանրապետության օրենքների և Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նորմատիվ բնույթի որոշումների, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերի և կարգադրությունների, կառավարության և վարչապետի որոշումների նախագծերը 15-օրյա ժամկետում համաձայնեցվում են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի ԻԵՏ:

45. Եթե սույն կարգի 43-44-րդ կետերում նշված ժամկետներում նախագծի վերաբերյալ առարկություններ և առաջարկություններ չեն ստացվում, ապա նախագիծն առանց դրանց կարող է ներկայացվել կառավարության աշխատակազմ:

46. Հայաստանի Հանրապետության օրենքների և Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նորմատիվ բնույթի որոշումների, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերի և կար-

գաղութային, կառավարության և վարչապետի որոշումների նախագծերի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի, ժողովրդական նախարարների, ինչպես նաև սույն կարգի 40-րդ կետում նշված մարմինների ղեկավարների առարկությունները և առաջարկությունները կցվում են այդ ակտերի նախագծերին:

47. Սույն կարգի 40-46-րդ կետերով նախատեսված համաձայնեցումները կասարում է հարցը ներկայացնողը, իսկ նրա բացակայության դեպքում՝ նրան փոխարինող ղաեցնուսար անձը:

48. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի, ինչպես նաև ժողովրդական այլ նախարարների առարկությունների և առաջարկությունների հիման վրա կառավարության քննարկմանը հարցը ներկայացնողն անհրաժեշտ ճեգրումներ և ուղղումներ է կասարում նախագծում և դրանք ներկայացնում կառավարության աշխատակազմ: Եթե Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը, ժողովրդական մարմինների ղեկավարներն առարկություններ և առաջարկություններ չունեն նախագծի վերաբերյալ, ադա համաձայնեցումը ձևակերպում է նախագծի վրա նեագում կասարելով կամ առանձին նամակով:

49. Եթե Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը, ժողովրդական մարմինների ղեկավարներն առարկություններ և առաջարկություններ ունեն նախագծի վերաբերյալ, ադա հարցը ներկայացնողը նախագծին կցում է նաև սեղեկանք ընդունված առարկությունների և առաջարկությունների, ինչպես նաև առկա սարաձայնությունների մասին՝ չընդունման դասձառների հիմնավորմամբ:

50. Հայաստանի Հանրապետության սնեցության առանձին ճյուղերի գարգացման, կադրակա ներդրումների, կյութական դաեարների և ֆինանսական միջոցների հասկացման վերաբերյալ առաջարկությունները կառավարության անդամները կառավարություն են ներկա-

յացնում միայն Հայաստանի Հանրապետության ղեկավարական բյուջեի նախագծի կազմավորման ժամանակաժամանակում:

51. Սույն կարգի 50-րդ կետի դաշտանային բացառություններ են թույլատրվում, եթե նվաճված հարցերը ծագում են սարվա ընթացքում՝ համադասասխան մարմիններից անկախ դասձանդներով:

52. Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի նախագծերը, անհրաժեշտ հիմնավորող փաստաթղթերով և նյութերով (էլեկտրոնային կրիչներով կամ տեղեկատվության փոխանցման այլ միջոցներով), կառավարության ֆինանսական են ներկայացվում մեկ օրինակից՝ հարցը ներկայացնող նախարարի ուղեկցական գրությամբ՝ հանձնվելով կառավարության աշխատակազմ:

53. Սույն կարգի 52-րդ կետում նվաճված փաստաթղթերի և ուղեկցական գրության մասին՝ դրանց մուտքագրման դաշտից ոչ ուժ, քան մեկօրյա ժամկետում՝ սահմանված կարգով կառավարության աշխատակազմի ղեկավարը զեկուցում է վարչապետին:

54. Կառավարության ֆինանսականը հարցեր ներկայացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության օրենքների, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի որոշումների, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերի և կարգադրությունների, կառավարության և վարչապետի որոշումների նախագծերի կամ այլ փաստաթղթերի վերաբերյալ եզրակացություն կամ կարծիք հայտնելու հանձնարարականներ կարող է սալ վարչապետը: Վարչապետի հանձնարարությամբ դրանք կարող են փոխանցել փոխվարչապետը, համադասասխան նախարարը, կառավարության աշխատակազմի ղեկավարը:

55. Կառավարության ֆինանսականը ներկայացված հարցերը կառավարության աշխատակազմի ղեկավարի կողմից կարող են վերադարձվել հարցը ներկայացնողին, եթե չեն համադասասխանում սույն կարգին կամ կառավարության կողմից իրականացվող ֆադաֆակա-նությանը:

56. Սույն կարգի 54-րդ կետով նախատեսված հանձնարարականները կատարվում են վարչադեպարտամենտի կողմից սահմանված ժամկետներում, իսկ այդդեպարտամենտի ժամկետները սահմանված չլինելու դեպքում՝ 15-օրյա ժամկետում:

57. Եթե սույն կարգի 54-րդ կետով նախատեսված դեպքերում հանձնարարականը սրվում է միաժամանակ մի քանի նախարարի, սարածֆային կառավարման մարմինների, ադա հանձնարարականի կատարման դասասխանասուն առաջին հասցեատերն է, որի անվան դիմաց նշվում է «Հավաք» բառը: Հանձնարարական ստացած մյուս դեպարտամենտի կառավարման մարմինները դարձվում են դասասխանասուն կատարողին կատարման ենթակա փաստաթղթերի վերաբերյալ առաջարկություններ, առարկություններ և անհրաժեշտ նյութեր ներկայացնել այն հաշվով, որդեպարտամենտի վերջինս հնարավորություն ունենա սահմանված ժամկետում դասասխան ներկայացնել վարչադեպարտամենտին:

58. Եթե հանձնարարականում բացակայում է «Հավաք» նշումը, ադա դրանում նշված դասասխանասուն կատարողները հանձնարարականի կատարման վերաբերյալ իրենց կարծիքներն ուղղակի ներկայացնում են վարչադեպարտամենտին:

59. Հանձնարարականում սահմանված ժամկետները հիմնավոր դասճանաչելով չկատարելու դեպքում դասասխանասուն կատարողը համադասասխան նամակով միջնորդում է վարչադեպարտամենտին սահմանված ժամկետը երկարաճգնելու համար՝ նշելով իր կողմից առաջարկվող վերջնական ժամկետը:

60. Կառավարություն կամ վարչադեպարտամենտին ներկայացված փաստաթղթերը նախարար քննության է առնում կառավարության աշխատակազմը՝ 15-օրյա ժամկետում: Կառավարության քննարկմանը հարցը ներկայացնողից կարող են դահանջվել լրացուցիչ փաստաթղթեր, նյութեր, հիմնավորումներ:

61. Անհրաժեշտության դեպքում այդ քննարկումներին հրավիրվում

են Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմի, սվյալ հարցով իրավասու կամ ռահագրգիռ ՀԳՄ-ի ներկայացուցիչներ կամ այլ ղաւսնուսար անձիւնի:

62. Կառավարության ֆննարկմանը ներկայացված հարցերը ղարսաղիւր համաձայնեցվում են ռահագրգիռ ղեսական մարմնների հեւ, եթե դրանցում ռուսիվում են համաղասասիսան քնագավաներին վերաբերող հարցեր: Տարաձայնությունների առկայության դեղմում փաստաթղթերին կցվում է չհամաձայնեցված հարցերի վերաբերյալ արձանագրություն՝ տարաձայնության ղասձառնների հիմնավորմամբ:

63. Կառավարություն ներկայացված փաստաթղթերը կառավարության ֆննարկմանն են ներկայացվում վարչաղեսի մակագրությամբ՝ կառավարության աշխատակազմի ղեկավարի ներկայացմամբ:

64. Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերի և կարգաղրությունների նախագծերը, մինչև դրանի կառավարության նիսի օրակարգում ընղղրկելը, կառավարության աշխատակազմը հավափ կարծիքներով ներկայացնում է Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմ՝ Հայաստանի Հանրապետության Նախագահի կարծիքն սանալու համար:

65. Սույն կարգի խախտմամբ կառավարություն կամ վարչաղեսին ներկայացված Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի նախագծերը և դրանց վերաբերյալ մյուս նյութերը կառավարության աշխատակազմի ղեկավարը վերաղարձնում է՝ դրանի սահմանված կարգով ներկայացնելու համար:

## **IV ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԵՐ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ, ԱՆՑԿԱՅՆԵԼՈՒ ԵՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ**

66. Կառավարության հերթական նիստերը, որոշես կանոն, հրավիրվում են հինգգաթի օրերին: Անհրաժեցության դեղմում կառավարության նիստեր կարող են հրավիրվել նաև այլ, այդ թվում՝ ոչ աշխատանքային օրերի:

67. Կառավարության հերթական նիստերը հրավիրում և վարում է վարչադեպարտամենտը: Արտաքին գործերի, դատախազության և ազգային անվտանգության հարցերով կառավարության նիստ կարող է հրավիրել և վարել Հայաստանի Հանրապետության Նախագահը:

68. Կառավարության արտաքին նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեցության՝ Հայաստանի Հանրապետության Նախագահի կամ վարչադեպարտամենտի նախաձեռնությամբ կամ կառավարության որոշմամբ:

69. Կառավարության նիստերի նախադասարան ամբողջ աշխատանքային, ինչպես նաև նիստերի անցկացումն աղյուսակվում է կառավարության աշխատանքային:

70. Կառավարության նիստերի ժամանակացույցը և օրակարգը հաստատում է վարչադեպարտամենտը:

71. Կառավարության նիստի օրակարգում կարող են փոփոխություններ կատարվել Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից՝ արտաքին գործերի, դատախազության և ազգային անվտանգության հարցերով, վարչադեպարտամենտի կողմից, ինչպես նաև կառավարության անդամների նախաձեռնությամբ՝ նիստը վարողի համաձայնությամբ:

72. Կառավարության նիստերի և դրանցում քննարկվելիք հարցերի մասին ոչ ուր, քան նիստի սկսվելուց երեք օր առաջ տեղեկացվում են

կառավարության անդամները, հրավիրվողները, անհրաժեշտության դեպքում՝ նաև այլ անձինք:

73. Հայաստանի Հանրապետության Նախագահին, վարչապետին, կառավարության անդամներին և հրավիրվող ղափառականներին անձանց սույն կարգի 72-րդ կետով նախատեսված ժամկետից ոչ ուշ քան մեկ ամիսը անց նախապես, օրակարգում ընդգրկված հարցերը և դրանց առնչվող նյութերը:

74. Կառավարության նիստերն անցկացվում են Երևան քաղաքում, կառավարության նստավայրում՝ Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն, 1:

75. Կառավարության նիստերը կարող են անցկացվել արտակարգ` Հայաստանի Հանրապետության Նախագահի նախաձեռնությամբ` արտակարգ քաղաքականության, ղափառականության և ազգային անվտանգության հարցերով, կամ վարչապետի նախաձեռնությամբ:

76. Կառավարության նիստերն սկսվում են նախօրոք նշանակված ժամին և ավարտվում նույն օրը: Նիստերը կարող են անցկացվել ընդմիջումներով: Նիստերի ընդմիջումները հայտարարվում են նիստը վարողի կողմից` յուրաքանչյուր անգամ առնվազն 30 րոպե տևողությամբ: Տեսական ֆննարկում ղափառական հարցերի ֆննարկումները կարող են հետաձգվել հաջորդ օրը, իսկ լրացուցիչ փաստաթղթեր կամ ուսումնասիրություններ ղափառական հարցերը` հաջորդ հերթական կամ արտակարգ նիստի օրը:

77. Կառավարության նիստերին (այդ թվում` դռնփակ) մասնակցում են Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմի և կառավարության աշխատակազմի ղեկավարները` խորհրդակցական ձևի իրավունքով:

78. Կառավարության նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել նաև Հայաստանի Հանրապետության օրենքներով ստեղծված մեծադեպ գործող հանձնաժողովների (ծառայու-

թյունների, խորհուրդների) ղեկավարները, Հայաստանի Հանրապետության գլխավոր դասախազը, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահը և Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի ղեկավարները, իսկ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեղերում՝ նաև այլ անձինք:

79. Կառավարության նիստերին կարող են հրավիրվել վարչապետի խորհրդականները, կառավարության աշխատակազմի աշխատողներ, ինչդեպ նաև այլ անձինք: Կառավարության սլյալ նիստին կամ սլյալ նիստի հարցի ֆինանսմանը հրավիրվողների ցանկը, վարչապետի համաձայնությամբ, սահմանում և նիստին մասնակցությունն ադախովում է կառավարության աշխատակազմի ղեկավարը:

80. Կառավարության նիստերն անցկացվում են դռնփակ, եթե՝

- 1) ֆինանսվում են ղեկական, ծառայողական կամ օրենքով դադարավոր այլ գաղտնիք համարվող տեղեկություններին առնչվող հարցեր.
- 2) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 59-րդ հոդվածով նախատեսված դեղերում ֆինանսվում է Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան կամ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով դիմելու հարցը:

81. Կառավարության նիստերին կառավարության անդամների մասնակցությունը դատարանի է: Կառավարության անդամը կառավարության նիստերին կարող է չմասնակցել սույն կարգի 29-րդ կետում նախատեսված հիմքերի առկայության, իսկ այլ դեղերում՝ վարչապետի համաձայնությամբ:

82. Կառավարության նիստերն իրավագոր են, եթե դրանց մասնակցում է կառավարության անդամների առնվազն կեսից ավելին:

83. Սլյալ նիստի օրակարգի հարցերն ընդունվում են առանց փեարկության՝ նիստը վարողի հրադարակմամբ:

84. Օրակարգի հարցերի ֆինանսական հերթականությունը սահմանում է կառավարության նիստը վարողը:

85. Քննարկումներից առաջ սվյալ հարցի վերաբերյալ լսվում է համադասասխսան զեկուցում, որով հանդես զալու իրավումֆ ունեն կառավարության անդամները, նրանց բացակայության կամ նիստը վարողի համաձայնության դեղֆում՝ նրանց սեղակալները:

86. Կառավարության նիստում ֆննարկվող հարցերի վերաբերյալ զեկուցման համար սրվում է մինչև 20 րողե, էլույթների համար՝ մինչև 5 րողե, սեղեկանֆների համար՝ 2 րողե ժամանակ: Նիստը վարողը, անհրաժեեսության դեղֆում, կարող է սահմանել այլ ժամկեսներ:

87. Ձեկուցմանը հաջորդում են հարցի Եուրջ էլույթները: Նիստը վարողը ֆննարկվող հարցի վերաբերյալ իր կարծիֆն արսահայսում է վերջում:

88. Ելույթներն ավարսվաժ են համարվում զեկուցողի կողմից ֆննարկումների վերաբերյալ իր կարծիֆի արսահայսումից հեսո:

89. Օրակարգի յուրաֆանչյուր հարցի վերաբերյալ կառավարության որոԵումն ընդունվում է այդ հարցի ֆննարկման ավարսից հեսո՝ նալիֆան հաջորդ հարցի ֆննարկմանն անցնելը՝ բացառությանմբ այն դեղֆերի, էրբ հարցի ֆննարկումը հեսաձզվում է:

90. Կառավարության որոԵումն ընդունվում է բաց ֆվեարկությանմբ, էթես դրա օզսին ֆվեարկել է նիսին մասնակցող՝ կառավարության անդամների կեսից ավելին: Քվեարկությունը կասարվում է «կողմ» կամ «դեմ» ձայներով: Ձայների հավասարության դեղֆում վարչաղեսի ձայնը վձռորոԵ է:

91. Քվեարկությանը մասնակցում են միայն վարչաղեսը և Հայասանի Հանրաղեսության նալսարները:

